

մանաւանդ՝ յունական եկեղեցու այս տարրը խիստ օգտաշատ եղաւ:

Օրթոդոքս եկեղեցին միշտ կայսերական քաղաքականութեան գործիք դառնալու վտանգի մէջ էր: Սովորական պատրիարքներին և եպիսկոպոսներին շահելը շատ հեշտ էր. մայրաքաղաքում գրտնուած առևանկան ժողովը կամ սինհոդոսը կարիքի ժամանակ մի միջոց էր բողոքին ընկճելու: Աւանկանները միայն դիմադրելու և եթէ պէտք էր նաև իրենց կեանքը զոհելու, քաջութիւն էին ցոյց տալիս հարկաւոր դէպքում: Արող է մոլեռանդութիւն համարուել այս կարող է մտքի սահմանափակումով բացատրուիլ: Բայց յամենայն դէպս նոքա մտում են յարգանքի արժանի, որովհետև իրենց համոզման համար յառաջ էին նետուում՝ դոնէ աւելի արժանաւոր էին քան նոքա, որոնք երկչտութեամբ կամ անձնական շահի պատճառով խնայահոյս էին:

Բայց վանականութեան ազդեցութիւնը այս քաղաքական շրջանից դուրս տարածուում է նաև կեանքի այլ կողմերի վրայ, որտեղ նա գործում է անկասկերպով, այսինքն առանց օժանդակ միջոցների և ինքնարեւարար: Աւանկանին վերագրուած հոգևոր շնորհները և նրա բարեխօսութեան վրայ դրած վստահութիւնը շարժառիթներն են այն սերտ յարաբերութեան, որ կայ վանականութեան և ժողովուրդի մէջ:

Արդէն Անտոնիոսի վարքը պատմում է, թէ ինչպէս մարդիկ խմբերով նորա մօտ ուխտի էին գնում՝ նրա աղօթքը և հոգևոր խրատները հայցելու: Նա իբր հոգևոր կոիւնքի մէջ փորձուած մարդ՝ կարող է համարուում սրտի խորքերը տեսնելու և ներքին կեանքն աւելի ճիշտ կերպով ծանաչելու: Նրանից, իբր Աստուծոյ հաւատարմատարից, ակնկալում էին որ կարող է նաև ուրիշներին փրկել բարեխօսութեամբ: Անտոնիոսի վարուց տուած նկարագրութիւնը ոչ միայն առասպելական չէ, այլ և հաստատուում է ամեն ժամանակների անկասկածելի պատմական փաստերով: Էննց որ վանականի առանձնաշատուկ շնորհների և զօրութեանց, Աստուծոյ մօտ ունեցած առաջնակարգ զիբքի մասին աներկրայ հաւատք էր յառաջ գալիս՝ ժողովուրդը զիմում էր նրան, իբր իւր լուսազոյն խորհրդականին և միջնորդին, մեծ և փոքր անչափողութեանց, երաշտութեան մարտի, հոգևոր և մարմնաւոր ամէն տեսակ կարիքների միջոցին՝ մարդիկ իրենց ապաւենը վանականի մօտ էին դռնում: Աւելի քան մութացիկ կարգերը եւրոպայում՝ վստահութիւն են վայելիլ վանականները յունական ժողովուրդի մօտ: Թէ ինչքան մեծ է եղիլ նրանց ազդեցութիւնը՝ ակնյայտի երևում է նրանից, որ կայսերական քաղաքականութիւնը լուրջ ուշադրութեան

էր առնում միշտ նաև այս գործօնը: Երբ Անաստաս կայսրը 512 ին ուզում էր քաղկեդոնականութիւնը թողնել, բարեոք համարեց յարմար առթիւս Սարային 2000 ուկի մատուցանել: Բարի Սարան իւր պարզութեամբ շնկատեց կայսեր նպատակը, այնուամենայնիւ նա յանդգնեց նախատելով երուսաղէմից դուրս վանել այն սպային, որին յանձնարարուած էր կայսեր կամբը յայտնել նրան: Պաղեստինի վանականութեան զիջանելով միայն Յուստինիանոս դատապարտեց Արողինէսին՝ նա զիտէր որ Պաղեստինի խաղաղութիւնը դրանից է կասեռած: Ի՞նչ նեղութիւններ չբաշեց պատկերամարտութեան ժամանակ Աոստանդին Ապրոնիմոս (741—775), մինչև որ կարողացաւ հեռուոր Ալիմպոսի վերայ ձգնող Ստեփաննոս մանկան շահել:

(՛ր շարունակուի):

### ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ:

ԿԵԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ:

Բաւական մեծ իրարանցում պատճառեց վերջին ժամանակներս և ընդարձակ շրջաններ խորհրդաւածութեան նիւթ եղաւ այն, որ Վ. Ի. բցբուրդի համալսարանի կաթողիկէ աստուածաբանութեան ուսուցչապետ Հէլլե չորս աչքի ընկնող գրուածները «Արդեւեալ դրեանց ցուցակի» մէջ մտան: Հէլլե 50 տարեկան մարդ է, 1891 թ.-ից է վեր ուսուցչապետ Վ. Ի. բցբուրդում: Նա յույանի եղաւ աւելի 1896 թ.-ին, երբ իւր տեսչական ճառի մէջ պահանջ դրաւ, որ կաթողիկէ աստուածաբանութիւնն ազատութիւն ունենայ զիտնական ուսումնասիրութեան համար: Կաթողիկէական թերթերից ոմանք պաշտպանեցին նորան, ոմանք հակառակեցին, և Հէլլե դարձաւ սղոտ մտածող կաթողիկէ ուղղութեան ներկայացուցիչ: Անցեալ աշնան լրագիրները հազարեցեցին, թէ Տրիերի Աորում եպիսկոպոսը 40 մեղադրանաց կէտեր է գտել Հէլլե գրուածներին մէջ և Լուսմ է գնացել, որպէս զի բանադրանք գնել տայ: Ինչոք վերայ, յետոյ լուտեցաւ, որ եկուիտներն ամէն ջանք դործ են դնում այդ բանադրանքը յաջողեցնելու, և վերջապէս վեարուտք ամսին պաշտօնապէս յայտարարուեցաւ, որ արդէն զեկտեմբերին Հէլլե գրուածները ցուցակի մէջ են մտել: Հաս հետաքրքրական հարց էր այնուհետև արդեօք Հէլլե կհպատակէ՞ այդ վճռին, թէ բողոքելով կեղի կապերը իւր եկեղեցուց հեռ և կշարունակէ իւր համոզումները պաշտպանել այդ հար-

ցը վճարած է այժմ. մարտի 4-ին նա իւր ունկրնդիւնները առաջ յայտնել է, որ իբրև կաթողիկէ և բաճանայ իւր պարգքն է համարել խոնարհել եկեղեցւոյ հովուապետական իշխանութեան առաջ, բայց այդ չի նշանակում խոտաովանել, թէ ինքը շեղուած է եղել ուղիղ դաւանութիւնէն: Պատկան թերթերն աշխատում են քննականաբար նոյն իմաստով բացատրութիւններ տալ և արգարացնել նորա վարմունքը. բայց այս անակրնիալ հպատակութիւնը խոր ապուրբութիւն է թողել բոլորի վերայ և նոյն իսկ Չեքմեաանդ կաթողիկական շրջաններում մտատանջութեամբ հարցնում են՝ ո՞ր պէտք է հասնէ սորա վերջը, երբ ամէն մի փոքր ի շատէ ազատ շարժում խեղճութում է որդանի մէջ և կաթողիկական գիտութեան առաջնակարգ ներկայացուցիչներն անգամ միջոց և քաջութիւն չունին իրենց գիտնական համոզումները պաշտպանելու:

Ուշագրութեան արժանի է այս տեսակէտից Münchener Allg. Zeitung № 61 կաթողիկական նշանաւոր թերթի մի յօդուածը, ուր նկարագրած է թէ ինչպէս 1870 թ.-ից (Վատիկանի ընդհ. ժողովից) ի վեր դուր ջանքեր են լինում՝ Հռոմի ամէն քաղաքակրթական շարժում մեռելու թեան քօղով ծածկող քաղաքականութեան դէմ, զարթեցնել նորից գիտնական ուսումնասիրութեան ողին կաթողիկական աստուածաբանութեան մէջ, Գերմանիայում Քրայբուրգի և Վիւրցբուրգի Տիւպինգէնի համալսարաններն իրենց բանիրուն ուսուցչապետներով, Փարիզում Գիւշէն և Լօյզի հոշակաւոր գիտնականներն իրենց կողմնակիցներով և աշակերտներով, Ամերիկայում Վաշինգտոնի նորահաստատ կաթող. համալսարանը, Բենեդիկտեան կրօնաւորներ Վեմբլի համալսարանում, Ֆրանսիացի դոմինիկաններն ու Երկրում՝ ամէնքը դանազան կողմերից փորձեր արին նոր կեանք յառաջ բերել գիտնական դործունէութեան սէր և եռանդ արժարձել իրենց շրջապատողները մէջ, և յերաս ի կարծ միջոցում բուսական թուով երեւտաարդ ուժեր հանդէս եկան, որոնք գիտութեան դանազան ճիւղերում դնահատելի արգիւնք ցոյց տուին, բայց ի՞նչ եղաւ հետեանքը: Գերմանիայում ամենապատիւաւելու ուսուցչապետները «ժպիրհ» կերպով անարդուեցան և թշնամանուեցան, Ֆրանսիայում Գիւշէն, որ Վաքելլյօնից յետոյ սեռնաբուժելի եկեղեցական պատմիչն է համարուում, սակայնեցաւ իւր դատախօսութիւնները թողնել և պետական ծառայութեան մէջ մտնելով՝ Հռոմում, Հնարկիտութեան և պատմութեան Ֆրանսիական ճեմարանի» տեսուչ դառնալ: Լօյզի նարահատեալ մի կուսանայ վանքում պատարագներ է մատուցանում, որպէս զի սովոր-

մահ չլինի, Ամերիկայում եզուիաները սաստկապետեղով սիսեցին Վաշինգտոնի համալսարանի դէմ, և թէպէտ անդախան եպիսկոպոսներն իրենց համալսարանի պաշտպան էլան, բայց նոր յետ բաշուելու միտք չունին և այն նպատակը որին ուղղակի ճանապարհով հասնել չեն կարող՝ միջոցներ են հնարում կողմնակի կերպով իրազարծելու: Վերջին դոհն է անա պրոֆ. Շէլլը, Բոլոր խնդիրները մէջ առաջնակարգ դեր է կատարում հարկաւ եզուիաների կարգը և նորա իշխանութիւնը բոլոր եկեղեցւո վերայ տարածելու ձգտմամբ բերուում են այդ գոհերը, Շէլլ համարձակուել էր մի քանի ճշմարտութիւններ գրել եզուիաների մասին, որ նորա ներքէ շէլլ կարող, և ի վերջոյ հանեցին իրենց վրէժը, Այն հանգամանքը, որ բանադրանքի ենթարկուեցաւ ոչ միայն նորա իւր յառաջադիմական դադափարներով անուանի եղած տեսարակը, այլ նաև զբխաւոր երկասիրութիւնները՝ ապացոյց է որ հակառակորդները նպատակ են ունեցել բոլորովին խորտակել նորան. այսուհետև մի և նոյն է՝ կշարունակէ նա իւր ուսուցչական և զբախան դործունէութիւնը թէ ոչ, նորան մահացու հարուած է տուած և յանձին նորա իբրև ամէնից աւելի սիրելի պատկառելի և աղնիւ ուսուցչապետի՝ նուատաացրած է նաև Վիւրցբուրգի համալսարանի աստուածաբանական բաժինը: Նոյն վիճակը սպասում է անշուշտ նաև միւս համալսարաններն, որոնք փուշ են եզուիաների աչքում, Ցաւն այն է, որ այսպիսի գիտնականների դրուածները քննելու կոչուած յանձնաժողովի մէջ մի հասմարգ անգամ չկայ՝ նոցա ըստ արժանւոյն գնահատելու համար հարկաւոր գիտութեան պաշարն ունեցող, և որ այսպէս խոտապահանջ եկեղեցական իշխանութիւնը բոլորովին տարբեր վարմունք է ցոյց տալիս, երբ քաղաքական տեսակէտով զիջումներ անել պէտք է: Օրինակ՝ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Արնոն և Քօրը, որոնց առաջինը միտուած անգամ չէր և երկրորդն իբրև ժրանկ-մատն բանազբանքի ներքոյ պէտք է համարուէր, փառաւոր եկեղեցական թաղման արժանացան և վերջնոյ համար Եւրոպայի բոլոր մեծ քաղաքներում հոգեհանգիստներ կատարուեցան:

Բողոքական թերթերը հարկաւ աւելի խիստ լեզու են գործ դնում և Շէլլի օրինակով կրկին մի անգամ հաստատուած են դանում այն ողբալի ճշմարտութիւնը, թէ Հռոմիկական եկեղեցւոյ ներկայ կաղմակերպութեամբ որ և է բարենորոգում, որ և է յառաջադիմական շարժում մտցնել նորա մէջ անհնարին բան է, և թէ «գերմանական աստուածաբանական գիտութեան ստրկացումը Բաալացի բաճանաների ստեղծած

դաւանանքները հանդէպ դեռ պէտք է շարունակուի: «Պրոֆ. Շէլլ ասում է Täg. Rundschau թերթը (№ 55), մի համահրելի երեակայող էր, որ կարծում էր թէ կկարողանայ իւր եկեղեցւոյն հաւատարիմ անձնու իրութեան հետ միացնել նաև հաւատարմութիւն դէպի դիտութիւնը: որ իբրև ճշմարիտ գերմանացի զգում էր գերմանական շխտակ ընտրութեան և եզուիտական—ուսմանական շնչին ձևականութիւնները մէջ եղած հակառակութիւնը և աշխատում էր հաւատոյ և դիտութեան դադարակրական ըմբռնմամբ այդ անցարիւ հակասութիւնը հաշտեցնել: Նորա ձեռնարկութիւնը անցաջող անցաւ, և նա տեսնում է այժմ, թէ ինչպէս Հոռովք մի վշելով փլցնում ունչացնում է այն ամբողջ հոյակապ շինուածքը, որ նա կառուցել էր հաւատով՝ ապա՛նելի աշխատութեամբ հետադատութիւններ անելով:—Իբր թէ մի մտորումս մարդու ցնորք միայն լինէր, եւ նա ինքը իւր անունն ստորագրեց այն մահուան վճռի ներքոյ, որ Հոռովք դրել էր նորա ուսմանց և համոզմանց վրայ—նա հպատակեց ամենագոյնի կերպի: Նա այժմ մի խորտակուած մարդ է՝ մէկն այն քաղմութիւններից, որոնց խորտակել է Հոռովք դաժան կամքը:

— Սորա հետ զուգընթաց բարձրանում են մեղադրանքները կաթոլիկական հոգևոր դպրոցներում ապագայ եկեղեցականներին տուած կրթութեան դէմ: փաստեր են բերում, թէ ինչպէս յաճախ ազէա կամ իրենց անկարգութիւնների համար պատժուած մարդոց է յանձնուում այսանդ դպրոցական վարչութիւնը, ինչպիսի ազխութիւն և հոգևոր մնանկութիւն է տիրում այս դպրանոցներում կրթութիւն ստացած հոգևորականների մէջ: մասնացոյց են անում, թէ ինչ տխուր հետևանքներ է հասցրել այսպիսի կրթութիւնը Ֆրանսիայում, ուր հոգևորականութիւնն այնչափ է արհամարհուած բարձր դասակարգի կողմից և խորթացած հասարակ ժողովրդից, որչափ ո՛չ մի ուրիշ տեղ:

— Աւելի ու աւելի ընդարձակ ծաւալ է ստանում և շատերին զբաղեցնում Աւստրիայում սկսուած հակահոռովքական հոսանքը: Վարժիքներն այս շարժման խիստական բնաւորութեան և հետևանքի մասին շատ տարբերբերում են: Գործին աւելի մօտիկ, Աւստրիայում՝ եղողներն աւելի զգուշաւոր են և կասկածաւ շարժումը դուռ քաղաքական պատճառներից յառաջ եկած համարելով՝ նորա չեն կամենում, որ կրօնական խնդիրը շիտիտի քաղաքականի հետ և ամէն ցանկացող առանց այլևայլութեան բողոքական եկեղեցւոյ գիրքն ընդունուի: մասնաւոր նոցա իմանալով բողոքական եկեղեցին Աւստրիայում այնչափ զօրեղ չէ, որ կարողանայ մեծամեծ խմբերով նա-

բաղարձներ ընդունել և կրթական ազդեցութիւն ունենալ, մինչ, փոխանակ զօրանալու՝ նա կարող էր նոր ընդունած անկայուն, աւետարանական դաստիարակութիւնից զուրկ տարբեր շնորհիւ աւելի ևս ջլատուել, տարիականալ և կորցնել իւր դուռ աւետարանական բնաւորութիւնը: Այս տեսակէտով և Վիեննայի բողոքականաց եկեղեցական բարձրագոյն ատենար մի շրջաբերական է հրատարակել, որով պատուիրում է իւր իրաւասութեան ներքոյ եղած հոգևորականներին ամենայն զգուշութեամբ քննել բողոքական լինել ցանկացողներին և այն ժամանակ միայն ընդունել, երբ նոցա դաւանական կարեօր գիտելիքներն ունենան, և երևայ, որ նոցա դաւանակիրութեան շարժառիթը դուռ կրօնական է: Գերմանիայի շատ եկեղեցական թերթեր դատապարտում են այս սառն վերաբերումը և բողոքական եկեղեցւոյ պարտքը համարում ամէն կերպ քաջալերելով դաւանակիրական շարժումը՝ Հոռովք ընտրութեան լծից ազատել իրենց ազգակիցներին: Christliche Welt-ի անուանի թղթակիցներից մէկն աւետարանական դաւանութիւնն ընդունելը ամէնից ապահով միջոցն է համարում, որով Աւստրիան իրեն սպառնացող քաղաքական կործանումից ազատուել կարող էր, և այսպիսի հայեացքով աւետարանական ճշմարտութիւն քարոզել ու կրօնը մարդոց նաև քաղաքական փրկութեան գրաւական դարձնել՝ հակառակ չէ դա՛նում բարոյական ճանաչողութեան: «Աւետարանական միութիւնն» արդէն ժողովներ է գումարում, եւ ռանդով նպաստներ է ժողովում, մարդիկ է կարգում այս շարժման դարկ տալու համար: Թէ որչափ է մինչև այժմ դարձածները թիւը՝ ճիշդ յայտնի չէ. ոմանք մինչև 6000 են հասցնում, ուրիշները 600-ից աւելի չեն համարում:—Ի միջի այլոց մի գիմնադիտնի 20 աշակերտներ առանձին ցոյցերով բողոքական են դարձել, զայրացած Օլմիցի արքեպիսկոպոսի դէմ, որ դաւաճանել է նոցա կարծիքով գերմանական դասին:

— Ֆրանսիական կաթոլիկութիւնից դարձած եօթ քահանաներ մի տեսակ աւետարանիչ, ընկերութիւն են կազմել և կոչումն են անում ամէն դաւանութեանց պատկանող քրիստոնէաների՝ նպաստելու Ֆրանսիոյ աւետարանացման գործին: Թէպէտ այս գործը յաջողութեամբ յառաջ է գնում, բայց ինչպէս երևում է յաջողութիւնը շատ աւելի մեծ կլինէր, եթէ նիւթական կարիքն արգելք չդառնար շատերին իրենց խիստական համոզումը խոտովանելու: Այս կողմից գանգատուում են Ֆրանսիացի բողոքականները անտարբերութեան դէմ, որոնք խիստ կասկածանքով և սառնութեամբ են վերաբերում դէպի նորադարձները, և պատահում են կղերա-

կաններ, որոնք կաթոլիկ եկեղեցին թողնելուց յետոյ հարաբ դուռ են բաղխում մի տեղ, մի գործ գտնելու համար, և օրական հացի կարօտ մտառով՝ ճարահատեալ բռնանում են իրենց խզի վերայ և կրկին իրեն զգջացող նոյն եկեղեցւոյ զերկը վերադառնում:

— Թէ ինչպէս է շահագործում կաթոլիկ եկեղեցին տաճկահայոց խեղճութիւնը և ինչ բակկուլներով է առաջնորդուում այստեղ իւր առաքելական գործի մէջ՝ յայտնի է ազգային աղբիւրներից: Առանձին ուշադրութեան արժանի է սահայն Der Freiwillige № 30 Հայոց օգնող գերմ. ընկերութեան թերթի մի յօդուածը: «Եղուիաների օրինակին հետեւելով կաթոլիկ եկեղեցին աշխատում է արեւելքում իւր գործունէութեան գլխաւոր յենակէտը դարձնել մանուկների կրթութեան գործը որովհետեւ ինչպէս նոքա ասում են, մտամացած երիտասարդամեակի հասակաւորներին կատարած են դարձնում դէպի օտարները: Այս գործի համար հետաքրքրութիւն աշխատում են նորանով դարձեցնել և կենդանի պահել, որ ներկայացնում են այն իրեն հայրենասիրական պարագ Ֆրանսիացիներին համար: Արեւելքի կաթոլիկական առաքելութեան համար աշխատել՝ ասուած է ուղղակի այս առաքելութեան թերթի մէջ—նոյն է թէ Ֆրանսիայի համար աշխատել՝ այն երկրի համար, որ հնուց ի վեր արեւելքի կաթոլիկ համայնքների հովանաւորութիւնը իւր վերայ է առել: Միջազգային դաշնագրութիւնները միայն Ֆրանսիային են պաշտօնապէս իրաւունք տուել, կաթոլիկութիւնը բոլոր մահմեդական երկրներում պաշտպանելու և պատասպանելու: Հենց այս կոչումը, այս աստուածահանց առաքելութիւնը դործ դնելով է որ Ֆրանսիան իրեն եկեղեցւոյ անդամի կոչուել է հանդիսանում և կատարում է Աստուծոյ այն գործերը, որ դարերէ ի վեր կատարել են Ֆրանսիաները, Իսկ մասնաւորապէս մեր հողերը դպրոցներն են, որ մեր ազգային ազգեցութիւնը զօրացնում և Միջերկրահանի ամբողջ շրջանակում Ֆրանսիական լեզուն և առեւտուրը տարածում են: Մեր գործակիցները կրկնակի օգուտ անել կարող են՝ կաթոլիկութեան և Ֆրանսիայի հաւատոյ և հայրենիքի համար միանդամայն աշխատելով: Կաթոլիկ միտնորդներից մէկը՝ կաթոլիկական և բողոքական դպրոցների հահագանի գործունէութեան մասին խօսելով, ասում է. «Մեր դպրոցների առաջին նպատակն է մեր հահագան կորդներինը փակել, ապա արդէն մենք կամենում ենք բարեկրթ, լուստուրեալ քրիստոնեաներ պատրաստել, որոնք թէ գործնական և թէ աստեմական կրթութիւն ստացած լինեն: Այնուհետեւ նա նկարագրում է պար-

ճանօք թէ ինչպէս յաջողուել է իրենց մի տեղ բողոքականների ձեռքից հողը լուել և նոցա դպրոցը փակել տալ, և վերջն աւելացնում է, որ բացի բողոքականներից մօտ ժամանակներս վրտանդաւոր ակոյեան են դարձել ուսաց դպրոցները, որոնք շատ լաւ կազմակերպութիւն ունին, մի ընդհանուր վարչութեան հսկողութեան ներքոյ, արդէն քսանի մօտ բացուած են Գամատիոսի և Հայաստանի շրջակայքում և շատ տեղ, հահագանի բողոքականներ և կաթոլիկների՝ դէպի իրենց են զբաւում թէ մանուկներին և թէ ծրնողներին:—Պատէր Հարմատան նախագահութեամբ ղեկավարուող Արեւելքի դպրոցների գործը՝ ամփոփում է այժմ իւր մէջ Գամատիոսում, Հալէքում և Հայաստանի ու Ասորիքի ուրիշ գանազան վայրերում 140 տղայոց և 50 օրեօրաց դպրոցներ՝ 155 ուսուցիչներով և 98 վարժուհիներով, որոնք ունին 12,407 աշակերտ (7832 տղայ և 4575 աղջիկ): Գորա համեմատութեամբ բողոքականները գործը շատ փոքր է, ղերմանացիք պահում են 1200 որբ, ամերիկացիներին հետ մէկտեղ՝ 4000, բայց բողոքական թերթը միեթարուում է նորանով, որ իրենք այնպիսի սղորմելի նպատակ չեն դրել, ինչպէս կաթոլիկները. «աշխարհը նուաճել Յիսուսի համար» իրենց նպատակն է և Անդանին Յիսուս Բրիտոսս իրենց սպաւէնը:

— Այսպէս, կաթոլիկ եկեղեցին եռանդով շարունակում է մարդիկ որսալ աշխարհի հեռաւոր անկիւններում, բայց թէ որչափ կրթական ազգեցութիւն է ունեցել այն երկրների վերայ, որոնք դարերէ ի վեր նորա ցանցի մէջ էին, ցոյց է տալիս կրկին ամերիկացւոց նորնուածած երկրներին միեմալը: Կուրա և Պարսօրիկօ մեծ կղզիների բնակիչներն, ինչպէս երևում է, սպասածի հահագանի զոհ են ամերիկական կառավարութիւնից և օր աւուր աւելի հաշա աչքով են նայում նորա վերայ: Միայն հոյեւորականութիւնն է, որ խիստ զրգուում է, այն պատճառաւ գլխաւորապէս, որ ամերիկական ընդհանուր օրէնքների հիման վերայ կառավարութիւնը կրարել է նորա մի քանի ապօրինի եկամուտների ազբիւրը: Բայց եթէ ի նկատի ունենանք, որ 800,000 բնակիչ ունեցող Պարսօրիկօյի վերայ միայն 200 քահանաներ կան, այն ևս մեծ մասամբ Սպանիայից եկած՝ պարզ է որ հողեւորականութիւնն այստեղ մեծ ազգեցութիւն ունենալ չի կարող: Այդպէս է վարուում կաթոլիկ եկեղեցին, այնտեղ ուր նորա իշխանութիւնն արտաքին կերպով ապահովուած է և քաղաքական ու նիւթական շահեր չկան՝ նա ամենակն հող չէ սանոււմ ժողովրդի կրօնական-բարոյական դաստիարակութեան մասին, որով նոր նուաճում

երկիրները առարկելով թեան ընդարձակ ապարդեղ են ներհայացնում, և Ամերիկայի զանազան եկեղեցիները՝ կաթոլիկներն առաջին կարգում, արդէն պատրաստութիւններ են տեսնում զորա համար, Բարոյաւիան զեղծումները գէժ ամբերկական կառավարութիւնն ստիպուած է ամենայն զգուշութեամբ կրուել, բայց այնպիսի հրատարակական շարքներ, ինչպէս օր. ցլամտրատութիւնը՝ հարկու շատ շուտ կարգելուին: Արդէն օրէնքներ են հրատարակուած կենդանիների ապահովութեան համար, սրանց ջարդը ո՛չ մի տեղ այնչափ սննդնայ կերպով չի լինում, որչափ սպանիական կարուածներում: Արգելուած է նաև անբարոյական գրուածների վաճառումը և աղջիկ որսալու արուեստը, որին զո՛հ էին գնում յաճախ 14 տարեկանից պակաս մանուկներ:

Բուն Ապանիպոլում կառավարութիւնը կրկին կղերականների ձեռքն է անցել և հոգևորականութիւնը նոր ոյժ է ստացել: Այստեղ 94,000 քահանաներ կան, որոնցից 21,000 միայն դպրանոցներում կրթութիւն են ստացել. վանականները 68,000 են, միանձնուհիք 32,000: 17 1/2 միլիոն բնակիչներից 12 միլիոնը անդրագէտ են, այսինքն աւելի քան 2/3 մասը: Վոլերը փշայցել է սպանական կրթութիւնը և զորա հետ մէկտեղ Ապանիան:

— Առանձին գլխացուանք են պատճառում այժմ վատիկանին Ամերիկայի կաթոլիկները, և ո՛չ միայն Միացեալ Նահանգներում, որտեղ ըսկուած «սեբերիական», այսինքն կաթոլիկութիւնը տեղական պահանջներին յարմարեցնելու՝ շարժումը թէպէտ պայքը պաշտօնապէս դատարարեց, բայց կրկին միշտ արտաքոյ կարգի զիջումներ լինում են, ինչպէս օրինակ վերջերս թոյլ է արուել Նիւ-Իօրքում՝ աւետարանի մի նոր թարգմանութիւն հրատարակել, որ կատարուած է ո՛չ թէ կանոնական Վուլգատայի, այլ բնագրի ճշտադոյն օրինակների վերայ:— Խոչընդ պոս անգամ աւելի Հարաւային Ամերիկայի մասին է, որտեղ հոգևորականութիւնը թէ քաղաքական և թէ բարոյական տեսակէտից յաճախ սարօրինակ սկզբունքների է հետևում և կենտրոնի համար վասնզաւոր դառնում. այսպէս՝ հիմնուած այն կարծիքի վերայ, թէ կուսական կեանքը միայն կրօնաւորների համար պարտաւորեցուցիչ է, մինչ քահանաները միայն ամուսնանալով և իրաւունք չունեն, վերջիններս առանց քաշուելու սպօրինի ամուսնական կապեր են հաստատում: Այսպիսի կասկածելի երևոյթների առաջն առնելու նպատակով՝ պայքը կարևոր է համարել Հար. Ամերիկայի եպիսկոպոսներին ժողովի հրաւիրել Հռոմ, ուր յոյս ունին սանձելու նոցա ինչպէս հարկն է:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՆԵՐ.

Գերմանիա:

Մասնաւոր յօդուածներից յետոյ, իւր ճանապարհորդական ապաւորութիւններն առանձին զբքով հրատարակել է այժմ Գերմ. կայսեր ուղեկիցներից մէկը՝ սենեկապետ Փոն—Վերբախ: Chr. Welt №10 այս գիրքը քննադատելով՝ Բորբախ շեշտում է առանձնապէս այն հանդամանքը թէ սրչափ քիչ նախապատրաստուած են եղել կայսեր անմիջական շրջապատողները ճանապարհորդութեան համար և որպիսի տգիտութիւն են ցոյց տուել իւրաքանչիւր քայլափոխում արեւելքի վարքութարքի և սովորութիւնների նկատմամբ:— Յայտնի է որ մասնեղականութիւնն ամէն քանդակեալ պատկեր և արձան պիղծ է համարում. ինչպիսի նեղ դրութեան մէջ պէտք է դրած լինի ուրեմն կայսրը սուլթանին՝ երկու արձաններ նուիրելով նորան:— Վերբախ կայսեր հետ Կ. Պոլսում նաև նստելով՝ Հայկիֆա լքել է, ապա Երուսաղէմ ու Գամասկոս հանդիպել, և ահա Օսմանեան պետութեան մեծ մասը տեսած է համարում իրեն և այն եզրակացութեան գալիս, թէ կարծեցեալ Հիւանդ մարդը՝ «այս լուրջ խիստ ջերմեռանդ և համեստ, իւր կրօնին և իւր թաղաւորին անպայման կերպով հաւատարիմ ժողովուրդի մէջ զօրեղ և տակուն կենսական ոյժ ունի», միայն թէ այդ խեղճ ժողովուրդը «բոլորովին հակաբրիտանական կերպիւ հարստահարուում է քրիստոնեաներին՝ յոյների և հայերի կողմից, որոնք մինչև իսկ չքաշուեցան շիթութիւններ և խռովութիւններ յարուցանելու և այդպիսով իրենց երկրի իշխանին դժուար դրութեան մէջ դնելու»: Երբոր կայսեր ամենամօտ մարդն այսպիսի հասկացողութիւն և այսպիսի հայեացքներ ունի՝ բնական է, որ տաճկահայասակ քրիստոնիկաները բարի բան սպասել զերմ քաղաքականութիւնից չեն կարող:— Բորբախ մի քանի կենդանի օրինակներով ցոյց է տալիս, թէ ինչպիսի թիւրիմացութիւններ են երևան եկել կայսեր ճանապարհորդութեան մէջ պարզ աղիտութիւնից, եթէ ուրեք պատճառ չորոններ: Երբ օր. մի արբաբ շէյխ իւր նժոյզը նուիրում է կայսրահուն և սա քիչ շոյելուց յետոյ կրկին վերադարձնում է, հետք մի փայլուն մատանի, բայց շէյխը արտում և դժգոհ է մնում՝ բարի գերմանացիների մաքով չի անցնում, որ աղնիւ մահմեդականը մեծ «բախշիչ» էր սպասում և զորանից է նորա արտմութիւնը կամ երբ արբաբ կանայք երգում են՝ «Մեծ կայսրուհին մեզ ծօտ է եկել, մի լիքը մեծ քսակ փող է մեզ բերել, այդ պարզ ակնարկութիւնը չեն հասկանում և վերադառնալով Եւրոպա՝ պատմում են, որ ա-

ընկելքում միայն քրիստոնեականներն են (աներեսաբար «բախշիչ» խնդրում, մահամեղականները շատ ազնիւ և ծանրաբարոյ մարդիկ են: Աերջապէս՝ մինչ ստատիքական տեղեկութիւնները երկրազնտին վերայ եղած մահամեղականներէ թիւը մինչև 175 միլիոն են հասցնում միայն: Գերմ. կայսրը իւր բարեկամութիւնը խոտանում է 300 միլիոն մահամեղականներին, և ուրեմն փոխանակ նախօրօք նոցա ճիշդ թիւն ստուգելու: որ շատ հեշտ բան էր: առնուազն 100 միլիոնով բաղմացնում է վեհանձնաբար իւր բարեկամներին:

— Գերմ. Պետական ժողովում վերջերս հարց էր դրած աւագ ուրբաթ օրը, որ բողոքականներէ համար մեծ տօն է և կաթողիկոսներէ համար ո՛չ՝ ամբողջ պետութեան համար պարտաւորեցուցել տօն դարձնել, Թէ ժողովում և թէ դուրսը մամուլի մէջ շատ վէճեր եղան այս մասին. կաթողիկոսները պնդում են, թէ իրենց եկեղեցին այդ օրը տօնական չի համարում: ուրեմն անտեղի է ստիպել նոցա մի աշխատանքի օր կորցնելու: մի քանի բողոքական թերթեր պատասխանեցին դորան: որ ոչ մի օր կորցրած չլինելու համար: փոխարէնը կարելի էր զոհել բարեկենդանի 3 օրերից մէկը: որոնք տօնական են կաթողիկոսներէ բնական նահանգներում և շատ զեղծամների առիթ են լինում: Բնչպէս երևում է, հարցը պէտք է վճարուի ի նպատակ բողոքականներին, և աւագ ուրբաթը, իբրև Փրկչի չարչարանաց և խաչելութեան օր: վայելուչ լրջութեամբ տօնուի ամբողջ երկրի մէջ:

— Պետ. ժողովում հարց է եղել նաև երկտասարդ սերունդի մէջ անբող բարոյական անկաման մասին և այդ առիթու պատգամաւոր Պատշէի խօսած ճառը զօրեղ տպաւորութիւն է գործել ժողովականներէ վերայ: Սոցիալ-դեմոկրատներէ տարածած հակակրօնական դադարները նա զլիսաւոր պատճառն է համարում այդ անկաման և, նոցա երգերից և գրուածներից շատ օրինակներ բերելով՝ ցոյց է առնու, որ այդպիսով ժողովրդից խլուում է նորա «ամենալաւ բարոյական նեցուկը» կրօնը: և տեղը ոչինչ չի արւում. հետևանքը պէտք է լինի բնականաբար հոգևոր դատարկութիւն և անկումն:

Հրապարակի վերայ եղած բարոյական զեղծումները դէմ արիաբար պատերազմելու զեղեցիկ օրինակներ են առնու ամբերկացի կանայք: նոքա խօսիւ բողոքեցին, երբ մի բաղմակին մորման «Համաժողովի» անդամ ընտրուեցաւ. այժմ ևս ես.անդուն ջանք են գործ գնում Պէնսիլուանիայի օրէնսդրական ժողովի մի անդամին հեռացնելու: որ վտա համբաւ է ստացել իւր անբարոյական շահատիրութիւններով:

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ

Տեղապահ Գեր Սարգիս արքեպիսկոպոսի ընդունած հեռագրների համաձայն Կորին Աեհափառութիւն Սրբ Հայրապետը բարեհաճել է մարտ 25-ին առ աւուտեան 11 ժամին մեկնել Տփլիսից և Սանահ սի վանքը հանդիպելով ամսի 28-ին հասել է ողջամբ Աղէքսանդրապոլ:

Յունուար 24-ին Մայր Աթոռ է վերադարձել Շամախույ Կոնստանտինոպոլի նախկին Նախանգամ Բարեշնորհ Սահակ վարդ. Տէր Միքայէլեանը:

Մարտ 22-ին ծանր հիւանդ վիճակի մէջ բերուեցաւ այստեղ Հին Նախիջևանի փոխնորդ Արժ. Կիւրեղ վարդապետը:

Մեծի պահոց օրերում իւրաքանչիւր կիրակե երեկոյ քարոզ է խօսուում Մայր Տաճարի մէջ, իսկ շաբաթ երեկոյ կամ կիւրակ առաւօտ գիւղի եկեղեցում Մայր Տաճարի մէջ խօսել են Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս և Գրիգոր ու Մակար եպիսկոպոսներ (վերջինս երկու անգամ). իսկ գիւղի եկեղեցում Արժ. Նդիա, Կարապետ Գարեգին և Սիօն վարդապետներ:

Բայի գործանից, Տեղապահ Սրբազանի կազարութեամբ շրջակայ մօտիկ տեղեր գնացել են քարոզելու՝ Արժ. Նդիա վարդապետ Ուզգիրի կողմերը, Կարապետ վարդապետ Աշտարակի Օշական, Սամազար, Երևան, Սիօն վարդապետ Նոր-Բայազետի գաւառը և այլ տեղեր: Գարեգին վարդապետ Երևան, Փարաքար Սամազար, Ալիրէզլու:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՅ:

Ս. Զեռնդեանց և ս. Վարդանանց տօները կատարուեցան այս տարի ևս ճեմարանում